

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Միքայել Մելքունյանի, Նաիրա Զոհրաբյանի, Վահե Էնֆիաջյանի, Վահան Բաբայանի և Արմեն Ավետիսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու մասին», «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-764-20.04.2015-ՏՀ-010/0 և Պ-764³-20.04.2015-ՏՀ-010/0) վերաբերյալ:

Օրենքների նախագծերի փաթեթով առաջարկվում է՝

1) Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում արտադրական գործունեության կազմակերպման արդյունքում ստացված արտադրանքի՝

ա. իրացումից ստացված եկամուտների նկատմամբ շրջանառության հարկը հաշվարկել 2 տոկոս դրույքաչափով,

բ. իրացումից ստացման ենթակա եկամուտները ազատել շահութահարկից և եկամտային հարկից.

2) «Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող արտադրական գործունեության մասով աշխատողներին վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից եկամտային հարկը հաշվարկել 15 տոկոս դրույքաչափով.

3) շահութահարկով հարկման առումով «Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով սեփական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտները համարել ծախս չհամարվող տարրեր:

Ընդ որում, նախագծերի փաթեթի հիմնավորման համաձայն, նախագծերի փաթեթով ներկայացված արտոնությունների սահմանման նպատակը համայնքներում գործարար և ներդրումային միջավայրի բարելավումն է, քանի որ առկա մի շարք խնդիրների պատճառով (այդ թվում՝ հարկային բեռի) համայնքներում ներդրումների ներգրավման առումով դժվարություններ կան:

Այդ կապակցությամբ հայտնում ենք հետևյալը՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներդրումային միջավայրի բարելավմանը և համայնքներում գործարար ակտիվության մակարդակի բարձրացմանն

ուղղված միջոցառումները ողջունելի է համարում: Այդ մասին է վկայում Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներդրումային միջավայրի գրավչության բարձրացմանն ուղղված միջոցառումները պետք է լինեն առավելագույնս հավասարակշռված և հասցեական, որպեսզի դրանց արդյունքում ակնկալվող արդյունքները գերազանցեն պետության կողմից կրած կորուստները: Այս առումով ներկայացված օրենքների նախագծերի փաթեթով առաջարկվող՝ հարկման բազայի կրճատմանն ուղղված աննախադեպ ընդգրկման ծավալներ ունեցող հարկային արտոնությունների սահմանման առաջարկություններն ընդունելի չեն, քանի որ դրանք միակողմանի բնույթ են կրում և ուղղված են միայն հարկային արտոնությունների սահմանմանը:

Միաժամանակ, գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության ներդրումային միջավայրի գրավչության պակասը բացառապես հարկային գործոնով պայմանավորելը հիմնավոր չէ, քանի որ Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը (հարկի դրույքաչափերը, հարկային հաշվառման և հարկային վարչարարության իրականացման ընթացակարգերը և այլն) ներդրումների իրականացմանը նպաստելու առումով չի զիջում տարածաշրջանի այլ երկրների հարկային համակարգերին: Այդ մասին է վկայում այն, որ օրենքների նախագծերի փաթեթով առաջարկվող արտոնությունների բացակայության պայմաններում անգամ բազմաթիվ են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հաշողությամբ իրականացված և իրականացվող ներդրումային ծրագրերը:

Հետևաբար, ներդրումների իրականացմանը խոչընդոտող գործոնների վերացման ուղղությամբ համապատասխան համակարգային միջոցառումներ չիրականացնելու դեպքում փաթեթով առաջարկվող արտոնությունների կիրառությունը հանգեցնելու է միայն

պետական բյուջեի կորուստների: Այս առումով սահմանամերձ գյուղական համայնքների համար սահմանված արտոնությունները հիմնավորված էին, քանի որ նման արտոնությունների սահմանումը հիմնավորվում էր նախևառաջ այն հանգամանքով, որ նշված համայնքների բնակիչները գտնվում են կյանքին և գույքին սպառնացող մշտական վտանգի ներքո, և արտոնությունների տրամադրումը նպաստում է նաև երկրի անվտանգությանը:

2. Ներդրումների ներգրավման խնդիրը այսօր արդիական է ամբողջ հանրապետության մակարդակով: Այս առումով անհասկանալի է նման խտրական մոտեցումների ամրագրման տրամաբանությունը, քանի որ հիմնավորված չի կարող համարվել ներդրումների խթանման ուղղությամբ պետության կողմից միայն տեղային միջոցառումների իրականացումը: Հետևաբար, գտնում ենք, որ ներդրումային միջավայրի խթանման նպատակով պետության կողմից իրականացվող միջոցառումները պետք է համալիր և համակարգված բնույթ ունենան:

3. Հարկ է նկատել, որ օրենքի նախագծով առաջարկվող արտոնությունները հիմնականում կրկնում են «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հարկային արտոնությունները: Վերջինս նշանակում է, որ օրենքների նախագծերի փաթեթով առաջարկվող արտոնությունները մրցակցության մեջ են մտնելու սահմանամերձ գյուղերի համար սահմանված արտոնությունների հետ և անխուսափելիորեն ձախողելու են այդ օրենքի առջև դրված հիմնական խնդիրները, քանի որ ակնհայտ է, որ օրենքի նախագծով առաջարկվող արտոնությունների սահմանման դեպքում ներդրում կատարելու ցանկություն ունեցող տնտեսվարող սուբյեկտները ներդրումներ կկատարեն Երևանից 120 կմ հեռավորության վրա գտնվող՝ սահմանամերձ չհամարվող համայնքներում: Արդյունքում չեն իրականացվի «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի առջև դրված այնպիսի նպատակները, ինչպիսիք են՝ սահմանամերձ գյուղական համայնքների

տնտեսական ակտիվության մակարդակի բարձրացումը, այդ համայնքներում բնակվող քաղաքացիների համար աշխատատեղերի ստեղծումը, եկամուտների ապահովումը և այլն:

4. Օրենքի նախագծով ներկայացված արտոնությունների սահմանման արդյունքում միևնույն գործունեությամբ զբաղվող, սակայն տարբեր տարածաշրջաններում փաստացի գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների միջև կստեղծվեն հարկման անհավասար պայմաններ, ինչը չի բխում հարկման արդարացիության ու հավասարության սկզբունքից: Հարկ է նկատել, որ այդ ռիսկերը առկա են նաև «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դեպքում: Այդուհանդերձ, հաշվի առնելով օրենքի առջև դրված նպատակների կարևորությունը և այն, որ օրենքի շրջանակներում ընդգրկվելու են սահմանափակ թվով համայնքներ, նման ռիսկերը կառավարելի են: Մինչդեռ, ներկայացված օրենսդրական նախագծերի փաթեթով առաջարկվող արտոնությունների մասով նշյալ ռիսկերը կառավարելի չեն և անտեսվել չեն կարող, քանի որ օրենքների նախագծերի փաթեթը, ըստ էության, կիրառելի է լինելու հանրապետության 6 մարզերում և, հետևաբար, կարող է ընդգրկել հարկ վճարողների առավել մեծ խմբեր:

5. Հարկային արտոնությունների սահմանումը, որպես կանոն, ուղեկցվում է հարկումից խուսափելու հնարավորությունների և դեպքերի ավելացմամբ: Արդյունքում, արտոնությունների սահմանումը հանգեցնում է առկա ռիսկերը կառավարելու համար հարկային մարմնի կողմից իրականացվող լրացուցիչ ծախսերի, հետևաբար նաև հարկային վարչարարության արդյունավետության նվազման: Այդ կապակցությամբ վերջին շրջանում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ներկայացված՝ հարկային արտոնություններ նախատեսող օրենսդրական նախաձեռնությունները մշտապես ուղեկցվում են առկա ռիսկերը նվազեցնելուն ուղղված մի շարք դրույթներով: Որպես օրինակ կարելի է նշել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների վարձու աշխատողներին վճարվող եկա-

մուտները եկամտային հարկի 10 տոկոս դրույքաչափով հարկելու դրույթը: Այս դեպքում, որպեսզի կառավարվեն այլ ոլորտներում զբաղված աշխատողների աշխատավարձը նույնպես եկամտային հարկի 10 տոկոս դրույքաչափով հարկելու ռիսկերը, օրենսդրությամբ սահմանվել է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի տնտեսվարող սուբյեկտները պարտադիր պետք է անցնեն հավաստագրման ընթացակարգեր, և վերջիններիս արգելվել է զբաղվել այլ գործունեությամբ: Նույնը վերաբերում է նաև «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, որով վարձու աշխատողներին վճարվող եկամուտների հարկման մասով արտոնություններ չեն նախատեսվել, քանի որ այդ դեպքում շեշտակիորեն մեծանալու են արտոնությունից անհարկի օգտվելու հնարավորությունները:

Այդ կապակցությամբ, չնայած նրան, որ օրենքների նախագծերի փաթեթով առաջարկվող հարկային արտոնություններն, ըստ էության, նախատեսվել են արդեն իսկ սահմանված հարկային արտոնությունների նախատիպով, այդուհանդերձ, փաթեթով հարկումից խուսափելու ռիսկերը կառավարող որևէ դրույթ չի նախատեսվել: Ասվածն ավելի առարկայական դարձնելու համար բերենք մի քանի օրինակ.

1) օրենքի նախագծով առաջարկվող արտոնությունները կիրառելի են բացառապես արտադրական գործունեության մասով, ինչը նշանակում է, որ Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության որևէ համայնքում գործունեություն իրականացնող սուբյեկտները իրենց եկամուտները կհայտարարագրեն որպես արտադրական գործունեությունից ստացված եկամուտներ՝ խուսափելու համար այդ եկամուտների հարկումից.

2) օրենքների նախագծերի փաթեթով առաջարկվում է արտադրական գործունեության մասով աշխատողներին վճարվող աշխատավարձերից և դրանց հավասարեցված եկամուտներից եկամտային հարկը հաշվարկել 15 տոկոս դրույքաչափով: Այս դեպքում նախ՝ անհասկանալի է, թե ովքեր են համարվելու արտադրական գործունեության մասով աշխատողներ, և երկրորդ՝ նման անհստակության դեպքում տնտեսվարող սուբյեկտները

բոլոր աշխատողներին որակելու են որպես արտադրական գործունեության մասով աշխատողներ:

6. Օրենքի նախագծում ներառվել են կարգավորումներ, որոնք հակասում են առանձին հարկատեսակների ընդհանուր տրամաբանությանը: Մասնավորապես, օրենքների նախագծերի փաթեթով մի կողմից սահմանվում է, որ եկամուտները ազատվում են շահութահարկից կամ եկամտային հարկից, մյուս կողմից այդ եկամուտները դիտարկվում են որպես եկամուտ չհամարվող տարրեր կամ նվազեցվող եկամուտներ: Ավելին, «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությունից (սեփական արտադրանքի իրացումից) ստացվող եկամուտները շահութահարկով հարկման նպատակով միաժամանակ չեն համարվում որպես եկամուտ և որպես ծախս (եկամուտները ցանկացած պարագայում ծախս չեն կարող համարվել):

7. Օրենքի նախագծում առկա են ներքին հակասություններ, ոչ հստակ ձևակերպումներ և այդ կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի պահանջները: Այսպես, նախագծի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետք է հաստատի նախագծով նախատեսված համայնքների ցանկը, մինչդեռ նախագծի 6-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետք է սահմանի համայնքների ցանկը և շահառուի կարգավիճակ ստանալու կարգը:

Բացի դրանից, «Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում առկա են հստակեցման և խմբագրման կարիք ունեցող դրույթներ: Այսպես, նախագծի 2-րդ հոդվածում նախատեսված «արտադրական գործունեություն» և «շահառու» հասկացությունները թերի են, դրանցում լիարժեք չի տրվում հասկացության իմաստը: Մասնավորապես,

ըստ ներկայացված հոդվածի՝ որպես արտադրական գործունեություն հասկացություն նշվում է «Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող համայնքների վարչական սահմաններում արտադրական գործունեության կազմակերպումը», մինչդեռ պարզ չէ, թե ինչպիսի գործունեության մասին է խոսքը: Նույն դիտողությունը վերաբերում է նաև «շահառու» հասկացությանը, որը բացատրվում է որպես արտադրական գործունեություն իրականացնող կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վախթանգ Միրումյանը:

Կից ներկայացվում են օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու մասին», «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման դեպքում

«Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու մասին», «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում
իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու
մասին», ««Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին»,
««Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ
կատարելու մասին», ««Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ**

«Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու մասին», ««Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», ««Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու մասին>>, <<Շրջանառության հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>>, <<Շահութահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> և <<Եկամտային հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունը

1. <<Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու մասին>>, <<Շրջանառության հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>>, <<Շահութահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> և <<Եկամտային հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ օրենքներ) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆ

«Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու մասին» և «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու մասին» և «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով նախատեսվում է ՀՀ կառավարության կողմից հաստատված ցանկում ներառված, Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների իրացումից ստացված եկամուտներն ազատել շահութահարկից (եկամտային հարկից), իսկ շրջանառության հարկը հաշվարկել 2 տոկոս դրույքաչափով:

Նախագծով ներկայացված արտոնությունների գաղափարն, ընդհանուր առմամբ, գործարար և ներդրումային միջավայրի վրա կարող է ունենալ **դրական ազդեցություն**, սակայն՝

- հիմնավորման կարիք ունի Նախագծով նախատեսվող արտոնություններն այն համայնքներում կիրառելը, որոնք գտնվում են Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության վրա,
- անհրաժեշտ է հաշվի առնել, որ Նախագծով նախատեսվող որոշ դրույթներ արդեն իսկ կարգավորված են «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքով: Իրավական խառնաշփոթ և տարընթերցումների առիթ չստեղծելու նպատակով, կարծում ենք, նպատակահարմար է քննարկել Նախագիծը և վերոնշյալ օրենքը միավորելու հարց,

Նախագծով նախատեսվող տարածքում կարող են լինել արտադրական գործունեությամբ զբաղվող այնպիսի տնտեսավարողներ, որոնց արտոնություններ տրամադրելը նպատակահարմար չէ: Այս պարագայում անցանկալի հետևանքներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել շահառու տնտեսավարողների շրջանակը և բացառել չհիմնավորված արտոնյալ պայմանների տրամադրումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու մասին» և «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու մասին» և «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) նախատեսվում է Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին տրամադրել հարկային արտոնություններ, որն էլ շուկայում կստեղծի անհավասար մրցակցային միջավայր և կհանգեցնի տնտեսվարող սուբյեկտների՝ միմյանց հետ մրցելու շարժառիթների սահմանափակմանը:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *բացասական ազդեցություն հայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու մասին», «Շրջանառության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու մասին», «Շրջանառության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն**:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

*«Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու մասին»,
«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին»
ՀՀ օրենքների նախագծերի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ*

Նախագծերի փաթեթով առաջարկվում է սահմանել, որ՝

1) Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում արտադրական գործունեության կազմակերպման արդյունքում ստացված արտադրանքի՝

1) իրացումից ստացված եկամուտների նկատմամբ շրջանառության հարկը հաշվարկվում է 2 տոկոս դրույքաչափով,

2) իրացումից ստացման ենթակա եկամուտները ազատվում են շահութահարկից և եկամտային հարկից:

2) «Երևան քաղաքից 120 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացվող արտադրական գործունեության մասով աշխատողներին վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից եկամտային հարկը հաշվարկվում է 15 տոկոս դրույքաչափով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ նախագծերի փաթեթի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա կլինի բացասական:

Միաժամանակ Նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի ծախսերի, ինչպես նաև ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

Պ-764-20.04.2015-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻՑ 120 ԿՄ ԵՎ ԱՎԵԼԻ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՔՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ցանկում ներառված Հայաստանի Հանրապետության Երեւան քաղաքից 120 կմ եւ ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

արտադրական գործունեություն՝ սույն օրենքի իմաստով Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ցանկում ներառված Երեւան քաղաքից 120 կմ եւ ավելի հեռավորության վրա գտնվող համայնքների վարչական սահմաններում արտադրական գործունեության կազմակերպում՝ բացառությամբ օգտակար հանածոներ արդյունահանող ընկերությունների եւ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտադրական գործունեության.

շահառու՝ սույն օրենքի իմաստով Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ցանկում ներառված Երեւան քաղաքից 120 կմ եւ ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում արտադրական գործունեություն իրականացնող կազմակերպություն եւ անհատ ձեռնարկատեր:

Հոդված 3. Հարկային արտոնությունները

Սույն օրենքի իմաստով տրամադրվում են հարկային հետեւյալ արտոնությունները.

1. Շահառուի արտադրական գործունեության կազմակերպման արդյունքում ստացված արտադրանքի՝

1) իրացումից եկամուտների համար շրջանառության հարկը հաշվարկվում է 2 տոկոս դրույքաչափով,

2) իրացումից ստացման ենթակա եկամուտները ազատվում են շահութահարկից կամ եկամտային հարկից:

2. Շահառուները աշխատողներին վճարվող աշխատավարձից եւ դրան հավասարեցված եկամուտներից եկամտային հարկը հաշվարկում են 15 տոկոս դրույքաչափով:

Հոդված 4. Շահառուի ծախսերի եւ եկամուտների հաշվառման առանձնահարկությունները

Շահառուները արտադրական գործունեության մասով վարում են եկամուտների եւ ծախսերի առանձնացված հաշվառում (կազմակերպությունների համար՝ առանձնացված հաշվապահական հաշվառում), որի հիման վրա հաշվետու ժամանակաշրջանի համար օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված համախառն եկամուտը, ինչպես նաեւ այդ գործունեության հետ կապված ծախսերը հարկման նպատակով նվազեցվում են նույն ժամանակաշրջանում

իրականացվող արտադրական գործունեության մասով ստացվող համախառն եկամտի եւ դրա հետ կապված ծախսերի գումարի չափով:

Եթե իրականացվող գործունեության հետ կապված ծախսերի որոշ տեսակների մասով հնարավոր չէ վարել առանձնացված հաշվառում, ապա այդ ծախսերը հաշվետու ժամանակաշրջանի համար օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ծախսերից հարկման նպատակով նվազեցվում են հաշվետու ժամանակաշրջանի համար օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված համախառն եկամտի մեջ իրականացվող արտադրական գործունեության մասով հաշվարկված համախառն եկամտի տեսակարար կշռին համապատասխան:

Առանձնացված հաշվառում վարելու արդյունքներն արտացոլվում են հարկային մարմին ներկայացվող հաշվարկներում եւ հայտարարագրերում:

Հոդված 5. Շահառուի պատասխանատվությունը

Եթե շահառու հանդիսացող ավելացված արժեքի հարկ վճարողի մոտ արձանագրվում է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հավելվածով սահմանված կարգի խախտում կամ արտոնության շահառու հանդիսացող շրջանառության հարկ վճարողի մոտ արձանագրվում է անփաստաթուղթ արտադրանքի, ապրանքների տեղափոխման կամ առաքման դեպք (այսուհետ՝ խախտում), ապա՝

1) տարվա ընթացքում առաջին անգամ խախտումն արձանագրվելու դեպքում կիրառվում է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը,

2) տարվա ընթացքում երկրորդ անգամ խախտումն արձանագրվելու դեպքում կիրառվում է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը եւ համապատասխան վարչական ակտը կազմելու օրվան հաջորդող օրվանից հարկ վճարողը դադարում է շահառու լինելուց՝ տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում եւ դրան հաջորդող մեկ տարում:

Հոդված 6. Եզրափակիչ եւ անցումային դրույթներ

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ին:

Սույն օրենքի պաշտոնական հրապարակումից հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության Երեւան քաղաքից 120 կմ եւ ավելի հեռավորության վրա գտնվող համայնքների ցանկը եւ սույն օրենքի իմաստով շահառուի կարգավիճակ ստանալու կարգը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-764՝-20.04.2015-SՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի դեկտեմբերի 19-ի ՀՕ-236-Ն օրենքի 7-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 1.2-րդ մասով՝

«1.2. «Երեւան քաղաքից 120 կմ եւ ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով շահառուի սեփական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտները հարկվում են 2 տոկոս դրույքաչափով:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ին:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-764²-20.04.2015-SՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի սեպտեմբերի 30-ի ՀՕ-155 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածը լրացնել նոր 11-րդ պարբերությամբ՝ հետեյալ բովանդակությամբ.

«Սույն օրենքի իմաստով եկամուտ չեն «Երեւան քաղաքից 120 կմ եւ ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով սեփական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտները: »:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածը լրացնել նոր «թ» կետով հետեյալ բովանդակությամբ.

«թ» «Երեւան քաղաքից 120 կմ եւ ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով սեփական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտները: »:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ին:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-764³-20.04.2015-SՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-246-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի առաջին մասը լրացնել նոր 36-րդ կետով հետեյալ բովանդակությամբ.

«36) «Երեւան քաղաքից 120 կմ եւ ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով սեփական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտները:»:

Հոդված 2. Օրենքի 10-րդ հոդվածի՝

1) առաջին մասում 1-ին կետի «սույն մասի 1.1-ին» բառերից հետո լրացնել «եւ 1.2-րդ» բառերով.

2) առաջին մասը լրացնել նոր 1.2-րդ կետով հետեյալ բովանդակությամբ.

«1.2) «Երեւան քաղաքից 120 կմ եւ ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող արտադրական գործունեության մասով աշխատողներին վճարվող աշխատավարձից եւ դրան հավասարեցված եկամուտներից եկամտային հարկը հաշվարկվում է 15 տոկոս դրույքաչափով:»:

Հոդված 3. Օրենքի 17-րդ հոդվածի երրորդ մասում «տեղեկատվական տեխնոլոգիաների» բառերից հետո լրացնել «եւ «Երեւան քաղաքից 120 կմ եւ ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը հարկային արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով սեփական արտադրանքի» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ին:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻՑ 120 կմ ԵՎ ԱՎԵԼԻ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ», ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ», ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Իրավական ակտերի անհրաժեշտությունը (նպատակը). Օրենքների նախագծերի փաթեթի նպատակը Երեւան քաղաքից 120 կմ եւ ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում (որոնց ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը) տնտեսական ակտիվության խթանումն ու գործարար միջավայրի բարելավումն է:

Կարգավորման հարաբերությունների առկա խնդիրները.

Հանրապետությունում, մասնավորապես՝ Երեւան քաղաքից ավելի հեռու գտնվող քաղաքային եւ գյուղական համայնքներում վերջին տարիներին առավել քան արդիական են նոր աշխատատեղերի ստեղծումը, գյուղական համայնքներում ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի ձեւավորումը, ուստի եւ ներդրումների ներգրավման ապահովումը, որը սակայն առավել քան բարդ է տարբեր պատճառներով, այդ թվում եւ՝ հարկային բեռի առկա մակարդակի հետեւանքով: Ուստի, հստակ է, որ արտադրական գործունեության կազմակերպման գործընթացում մի շարք հարկերի զծով արտոնությունների սահմանումը կարող է խթան հանդիսանալ վերոնշյալ համայնքներում գործարար եւ ներդրումային միջավայրի ակտիվացման, ինչպես նաեւ ՀՀ տարածքային համաչափ զարգացման համար, որը նախատեսված է նաեւ ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի դրույթներով:

Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Օրենքների նախագծերի սույն փաթեթով առաջարկվում է՝ 2016 թվականի հունվարի 1-ից Երեւան քաղաքից 120 կմ եւ ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությանը տրամադրել արտոնություններ շրջանառության հարկի, եկամտային հարկի եւ շահութահարկի մասով:

Իրավական ակտերի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը. Օրենքների նախագծերի սույն փաթեթի ընդունման արդյունքում ակնկալվում է Երեւան քաղաքից 120 կմ եւ ավելի հեռավորության վրա գտնվող համայնքներում իրականացվող արտադրական գործունեությունը ազատել մի շարք հարկերից՝ նպաստելով այդ համայնքներում գործարար եւ ներդրումային միջավայրի բարելավմանը՝ դրանով իսկ լուծելով պետության առջեւ ծառայած այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են հեռավոր մարզերում ներդրումների ներգրավումը, նոր աշխատատեղերի ստեղծումը, առկա աշխատատեղերի պահպանումը, երկրից արտագաղթի կասեցումը եւ այլն: